

# ԽԱՄԻՔԱՆ

ՅԵՐԱՅՈՒԹՅԱՆ  
ՅՈՑԱՆՈՒԹՅԱՆ

ԳԻՆԵԷ 10 Կ. ԳԱՒԱՌԵՆԵՐՈՒՄ 12 Կ.

1911 Շաբաթ, Յունաստանի 15-րդ.

ԹԻՖԼԻՍ. №3.

## ՄԵՄՈՒՆԸ ՊԵՏԵԿԱՆ ԳՈՒՄԵՅՈՒՄ



Մամուլ.—Իմ մասին օրինագիծը պիտ քննւի թէ չէ. դուք միշտ ասում էք թէ՛ մամուլ, մամուլ... ՅԱՒ.Շ.ՆԻՒՅՈՒՅԱ

Անդամները.—Մամուլ, մամուլ, բայց դա ով է, որակից է... միթէ մենք մամուլ ունենք—ն, դրա համար այժմս ինչ յամանակ է... յետոյ, թող սպասէ...

Բ Ա Ց Ի Ա Մ Է Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

1911 թ.

VI Տարի

# ՄԱՐԿԱԿ

VI Տարի


Երզիժարանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի  
ԼՈՅՍ Է ՏԵՄԵՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆՆԱՓԱՆ

Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և գլխիչ, անկեղծ և կեղծա-  
ւոր գործիչ-կորգիչների և խայտառակիչների:

Անհրաժեշտ քերթ բոլոր ընթացիկների համար

«ԽԱՌԱԲԱԼԱ» շաբաթիկն ծիծաղեցնում է, շատերին էլ ցաւեցնում, բայց ոչ որի հետ  
ոչ բարեկամ է և ոչ թշնամի: Խմբագրին կարելի է տեսնել, երբ քեֆերդ ուզի:  
Հասցեն՝ Тифлисть Музейный пер., Редакция „ХАТАБАЛА“:

Արտասահմանից՝ Tiflis Caucas Redaction «Khatabala»  
Խմբագիր-հրատարակող՝ Ա.Ս.Տ. ԵՐԻՑԵԱՆ



«ԽԱՌԱԲԱԼԱՅԻ»

Բ Ա Ժ Ն Ե Գ Յ Ե Լ Ե Լ Ե Լ Ե Լ Ե Լ Ե Լ

Տարեկան . . . . .	ՇՈՑ ԼՊՐՈՅՅՆ
Կէս տարին . . . . .	3 »
Երեք ամիսը . . . . .	1 » 50 կ.
Ամիսը . . . . .	— 50 »
Թիֆլիսում տարեկան . . . . .	4 » — »

«ԽԱՌԱԲԱԼԱ»-ի բաժանորդները կարող են  
ստանալ «ՍՈՒՐՉԱՆԴԱԿ» օրաթերթը պակաս  
վճարով, երկուսին միասին փոխանակ՝

Տարեկան . . . . .	12 ռ.
Կէս տարին . . . . .	6 ռ.
Երեք ամիսը . . . . .	3 ռ. 50 կ.
Մէկ ամիսը . . . . .	1 ռ. 20 կ.

100 տարով բաժանորդագրել  
ցանկացողին 75% զեղջ  
Ձրի կարգացողներին պէտք է նկարենք  
Գ Լ Խ Ի Վ ա յ Բ :

Ա Ջ Գ  
ՄԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ  
ԿԱՇՆՈՒՔՆԵՐ ԶԷ  
Ը Ն Գ Ո Ւ Ն Ո Ւ Մ

Սկզբունքային հարց § 7. պարբ.  
48. յօդ. 1456.—Կէս 18075. ստո-  
րակէս 1000000:

### Ի Մ Մ Կ Ի Թ Խ Ը Ի Ո Ւ Թ Ի Ն Ը (ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ)

Մէ լաւ խասիաթ ունիմ, հետտի լաւ  
խասիաթ, վուր նասալէգոտովէնի՝ վուր-  
թուց վուրթի միր ասկոււմը ամենքս  
էլ ունինք:

Կան մարթիք վուր հարփիցուլթէնի  
ու պիանիցուլթէնի խասիաթ ունին  
վուրթուց վուրթի:

Կան մարթիք, վուր սուտուցուլթէ-  
նի խասիաթ ունին:

Իմ խասիաթը էն է վուր՝ հէնց վուր  
նուր-տարին գալիս է՝ մկիթխաուլթին  
(գուշակուլթին) իմ անում թէ նուր-  
տարուլթին, թագա տարում աշխարքի  
վրէն ինչ թայիր-թայիր բանիր պիտ  
ըլին:

Էփրեմվերդին ծնաւ. ումը ծնաւ, հ'ը,  
ո՞վ գիղա, ապք թէ՛ միր Մակար Զմըշ-  
կովի՞ն, համա եանդլիլ էք, միր Մա-  
կարը, դուրթ է շասպանդ է, համա  
աշխարքիս վրէն գալիք օրերեմէն էն-  
դղամ է հասկանում, վուրց վուր դուր  
էչմիաճնի գուրձերեմէն, վուր դիփ  
մուլթն է. Մակարը չի կանում առի թէ,  
էսօր ան էսօր էստի կամ էնդի անձ-  
րե է գալու, էսդղամ թուլուլի շուր կու  
թալուի երդնքից ու սաւայ սրամէն  
ձինք քանի փուլթ է կշուում...

Համա իս, դուրթ է, էփրեմվերդի  
չիմ, մայնց՝ պակաս ոքմին էլ չիմ.  
ասկուտակով մինք էսէնցնիր ինք:

Էփրեմվերդին հիմի վուր միր քաղ-  
բումը ապրէր ու հաուց ասկային  
գուրձերու համա էլ օրէկան քաուուն  
ուլթ սհաթ փիքր անէր, պուլսը բան  
կու միւր... չէ, չէր միայ, չուրքի էս-  
տի նա ինչ կանար անի, քանդի՞ վուրց  
վուր դրափար ասած է. շուր տիրոնջ

չի ճանչնում:  
Մաշ:  
Համա իս դիդիմ:—  
Իս դիդիմ ու հոքով սրտով էլ իմա-  
նում իմ, թէ՛ վուր մարթու գլխում  
ինչդղամ միսալ խիլք կայ, ինչդղամ  
գրւանքայ գարման ու ինչդղամ քամի:  
Խիլք...  
Դարման...  
Քամի...  
Աստուձ խիլք տայ Գենշուվին, էս նրա  
շնորքներիցն է...  
Քամի:  
Դարման:  
Խիլք:  
Ամին:  
Համա գուրք էս ասէք, թէ էս տա-  
րին աշխարքիս վրէն ինչիւր ին ըլնելու,  
վուր իս էլ շուղար տամ:  
Աստուձ ողորմուլթինով էս տարի  
աշխարքս չի քանդուելու, թէ վուր աթ-  
մորթիք չքանդին:—  
էս մէկ:  
Համա մայնց, ով կանայ էնթաուրը  
ըլի, վուր միր աշխարքը քանդի—Չարթ  
ու փշուր անի:  
Հիմի լսեցէք:  
Աշխարքս վուրց վուր գիղիք. մէ  
ձմերուկի, մէ խնձուրի, մէ աղունակի,  
ձի հանգի կլոր բան է:  
Ձին, ան ձմերուկին ինչ գուրիս  
հուլի տաս, թէ վուր գայիմ ձու ան  
ձմեռուկ է, ու հաստակաշի է, վուրց  
վուր միր գուրձիչնիրը հաստագլուխ  
ին—վուրչինչ չիս կանայ անի, համա  
թէ վուր մէ մուտաու մուկ ձիւն պո-  
չով տայ ու ստուրցը դիվիր գցի ներ-  
քի՛ կու կտորուի, Չարդ ու փշուր կուլի:  
Աշխարքս էլ էնէնց է, թէ վուր էս  
մկների օխտիցը չգանք, ու ամէն մէ

### Հ Ր Ա Մ Ա Ն !!!

Խմբագրութիւնս իր շնորհակալութիւնն  
է յայտնում բոլոր այն անձանց, որոնք  
Սոր-Տարայ եւ ծննդեան տօներին մեզ  
յիշեցին եւ հեռագրներով, հեռախօսներով,  
կամակներով, պոստկարտերով ու ըն-  
ծաներով եւ բաժանորդագրութեամբ  
մեզ պատել են:

Խիստ շնորհակալ ենք.  
Յատուկ պարտաւորեցնում էք:  
Մեր աղօթքների մէջ մեզ պատուողնե-  
րին բոլորին կը յիշենք, արխէյն կայէք:

### Յ Ե Ե Ե Ն Ո Ւ Մ Ե Ն Ք

Այն բոլոր մեր ունկնդիրները, կուսակից-  
ները, գործակալները եւ այլն եւ այլն, ո-  
րոնք տակաւին չեն ուղարկել իրենց բաժ-  
նեզները, եւ պարտ են մեզ. յիշեցնում  
ենք որ «ս օ կ» ենք տալի մինչեւ ամսիս  
1-ը, այնուհետեւ փողերի համար կովից-  
նենք 10% օ/օ ուղիէս մեր քաղաքային  
վարչութիւնն է անում, իսկ զանցատուներ  
ին կանխօնք, եւ այնպէս որ ոչ գուր-  
նաղ կարողանան ուտել եւ ոչ փափէն մար-  
սել ապագայում:

Գրասենեակ

### Ա Ո Ւ Զ Ա Ր Կ Ո Ւ Մ Ե Ն Ք

Ցանկացողները եթէ ուզում են հայ-  
հայանքների դասեր վերցնել, թող կար-  
գան մեր կուսակցական թերթերը:  
Ամեն սորակը ընտիր-ընտիր հայհո-  
յանքներ, արտասահմանական արմատ-  
ներով և կովկասեան պատաստուձով:  
Կիրք էժան—հատը 5 կոպէկ:



# Մ Ե Ր Բ Ա Ն Ը Ս Տ Ե Ղ Ծ Ն Ե Ր Ը

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԵՒ ԱՌԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ.



ՅԵՐՈՅՆԵՄԼԻ  
ՆՈՅՆՈՐՈՍԵՅՆ



Աւտիք Իսահակեանցը հարցնում է—Վարժապետ, ես քեզանից կարծես բարձր եմ, չէ...

Բարեպաշտօն երեցիոսանի գէժըը դո-  
հունակութեան ժպիտ էր կալել չազ մտա-  
վածառութեան առևտուրից...

Սարկաւապների, դպիրների և ժամկոչնե-  
րի, յանդուրեմը չափ չկար, որովհետև նը-  
բանց ստանալիք կողմերը փոխել էին  
սպիտակ արասիներին...

Մի կողմը պատարարն էր անաջ արբուս  
չըրընկալին. խունկ, ծուխ, մոմ ու ժա-  
մոց...

Մի կողմը կերտներն անուարն էր շա-  
ղանում ճըլընկալին, ուզալթուն, տրտաի,  
մանէթ ու սակի...

Գէնը՝ հաւատացեալ ժողովուրդն էր թե-  
բահաւատ աղօթքների գիրկը նկատել ու  
սրան-նրան բամբասում...

Դէնը՝ կրօնամուլ քահանաներն էին իրենց  
տիրացուների հետ ծունկ չարում ի նշան  
Չերմեանդութեան...

Մի խօսքով՝

Կատարեալ իրարանցում... կենդանու-  
թիւն... աշխօյժութիւն... ամէն, ամէն ինչ  
կար բացի... բացի՝

Անկեղծ հաւատից և արդարութիւնից...  
ճշմարտութիւնից և պնդութիւնից...

Այդ միջոցին եկեղեցու Տէր-Տափակը մօ-  
տեցու աւազ երեցին և սրատարօք հարց-  
րեց.

— Տէր-Մլթնն հայր, գանձանակի ժամա-  
նակ չէ՞, արդէն «Սուրբ Աստուած» են ա-  
սում:

— Տէր-Տափակ, դու հստեղ չե՞ս, ի՞նչ է,  
չե՞ս տեսնում աէր-Գիգօլը արդէն գանձա-  
նակ է հաւարում:

— Ախր ես էի ուզում գանձանակի գնալ...

— Ոչինչ, դու էլ գնա յանուն կոյրերի...

Աւ տէր-Տափակը մի մեծ թաս ձեռքն ա-  
ռու ու թոս ժամաւորների գիրկը մաւաւ:  
Նրան հետեցին եկեղեցու սպասարներից  
մէկը և ժամկոչը:

Երկու բազէից յետոյ մտեցաւ տէր-  
Քուփթան.

— Մեծ տէրաէր, գանձանակի չեմ գնա-  
լու... միթէ ժամանակը չէ:

— Թէև երկուսը գնացել են, բայց ոչինչ,  
դու էլ գնա չքաւորների օգտին...

Տէր-Քուփթան էլ գնաց:

Եկաւ երրորդը, չորրորդը և աւազ երե-  
ցից իրաւունք ստանալով ամեն մէկը մի  
տիրացու և մի ժամկոչ յետեցի պցած գնա-  
ցին գանձանակի:

Վերջապէս տեղիցը շարժեց ինքը՝ «մեծ  
տէրաէրը» և անօք-փասօք, ժպիտը գէմբին,  
անաջ խաղաց գէպի ժողովրդի զբաղմունքը:

Մէկ էլ պատահեց էնպէս, որ քահանանե-  
րի գասում էլ քահանայ չմնաց. նրանք բո-  
լորն իրենց տիրացուների հետ շրջում էին  
ժողովրդի մէջ և փող հաւարում...

Մինչ այս՝ սկսեց ճրագարոյժի ծէսը. ա-  
մենքը պէտք է մէկ-մէկ վաւաւած մոմ ու-  
նենային և սկսեց աստուարը:

Մէկ էլ ամբօթի մէջ երեաց մի մեծ թա-  
բախ մոմ մի պարտնի գլխին դրած: Նրան  
հետում էին երկու հագի. մէկը ցածրիկ ու

հաստ-հաստ, միւսը բարձր ու լգարիկ: Նը-  
բանք աջ ու ձախ մոմ էին ցրում և փող  
հաւարում:

Գլխին դրած թարախը, նրան հետեղ  
պարանները երկար-երկար ժամանակ ան-  
հանդատութիւն պատճառելով ժողովրդին՝  
պատում էին եկեղեցում և աստուար անում:

Այս տեսարանը ամենքի համար տարօ-  
րինակ էր, ամենքի համար ազեղ մի ձե...  
Նրանցից շատերի կողմից դա նմանեցաւ  
այս կամ այն սովորոյթին, ի կ իմ կողքին  
կանգնած մի պարսն, որ քստ երեոյթին օ-  
տարական էր՝ բորձրածայն նկատեց.

— Խուրմա են ծախում ի՞նչ է, միթէ չէր  
կարելի մոմերը իր տեղում ծախել և կամ  
թէ ձեռքէ ձեռք բաժանել...

— Խուրմա, առիք ու թողիք... սա խուր-  
մից բէթար է: Խուրմէն փողօցներում շըր-  
ջեցնում են և ձվ ցանկանում է, նա է առ-  
նում. իսկ էստեղ զրտով են կոպնում մար-  
դու...

— Ճշմարիտ ասեմ, ես ամօթից գնեցի 20  
կապ. մոմ, հագիւ մի քանի շայի ունէի աօ-  
ների համար, էն էլ 20 կ. սրանց տեցի.  
նկատեց մի բան որ:

էս խօսակցութեան մէջ ես գուրս եկայ  
եկեղեցուց և «խուրման» թողի այնտեղ: Իմ  
մարում սկսեց հնչել վրացախօս կինտօի  
խուրմա ծախելու երգը թէ՛

«Խուրմա մօվիդա, խուրմա, խուրմա...»  
«Ձվէլի կալօշէ բզէ,  
«Ցարիէլ բութիկէրզէ,  
«Ըրիկինիս նաճէրէրզէ,  
«Խուրմա մօվիդա, խուրմա, խուրմա...»  
Ջաւազակ

**ԼԵՒ ՏՈՒՍՏՕՅԻ ՄՏՔԵՐԻՅ**

(ԿԵՄՆԵՐԻ ԵՒ ՄԱՐԴԿԱՆՑ ՄԱՐԻՆ)

(Որին մ'ենք քոյրովին նամածայն ենք և  
առաջարկում ենք ի կիրտովին վասն  
քարօրովեան սզգիս նայց).

Մարդու խելքն սպրում է անկախ սրտից  
և յաճախ գետեզում է իր մէջ մտքեր, ս-  
րանք վիրաւորական են, այլ և դաժան ու  
անհասկանալի զգացմունքի համար:

Արժէ պահ մի անջատել իր սովորու-  
թիւնից և հեռից, կողմնակի կերպով դի-  
տել մեր կեանքը, որպէսզի տեսնենք, թէ  
այն բոլորը, ինչ որ մենք կատարում ենք  
մեր կեանքի կարճեցեալ սաղահալացման  
համար, ոչ թէ խելապէս մեր կեանքն սպա-  
հով կացուցանելու համար ենք անում, այլ  
միայն նրա համար, որ զբաղւած զբանով՝  
մոռանանք այն, որ կեանքը երբէք սպա-  
հով չէ և չի էլ կարող լինել:

Միթէ, սզգերը, որպէս երկխոսներ, կարող  
են բախտաւորել լոկ միայն հաւատարու-  
թիւն բանի հնչմամբ:

Մարդկային մտքին անմատչելի է երե-  
ւոյթները պատճառական լինելով իրենց  
սակախ պատճառները իրենց իրենց  
ամփոփած է մարդկային հոգու մէջ: Եւ  
մարդկային միտքը՝ չթափանցելով երեւոյթ-  
ների բարդութեան և անհաշուելիութեան  
մէջ, որոնցից իւրաքանչիւրը վերցրած ա-  
ռանձին կարող է հանդիսանալ որպէս պատ-  
ճառ, բռնում է հէնց առաջին, ամենահաս-  
կանալի մօտիկից և ասում է՝ անա պատ-  
ճառը:

**Լ Ր Ա Տ Ո Ւ Ն**

Պետրովը այցելելով Ներսիսեան զբա-  
բոյի շինութիւնը, որտեղ դասաւանդութիւն  
է լինում, հիացած է մտացել ու դարձացել,  
որ այդ տեսակ գեղեցիկ շինութիւնը ձեռ-  
քից բաց են թողնում և նորն են կառու-  
ցում:

Մի քանի վարդապետներ սաստիկ ջեր-  
մում են ամուսնանալու համար և ցանկա-  
նում վանքից հեռանալ: Այժմ քանի որ  
կաթողիկոսական բնարտթիւնների հարց կայ  
ստապրէզում և խօսք կայ, որ վարդապետ-  
ներից էլ կարող են բնարտել, ուստի վան-  
քից միանգամայն հեռանալը վաղաժամ  
են համարում, թէև պատկերաւ էլ համա-  
կարծիք են:

Մեզ նայալէս թւում է, որ եթէ կոնստի-  
տորք այդ բաներին գէմ չի լինի—ինչ կայ  
որ—թող և պատկերաւ և սպասեն դուցէ և  
կաթողիկոս բնարտեն:

Բաթումից հեռագրում են, որ ժամատախտ  
է երեւոյցի: այդ աթիլս մեզ խնդրում են  
հողօրդել, որ ցանկացողները կարող են  
գնալ և օգտուել:

Մեակոյցի օրը, ամսիս 7-ին, Թիֆլիսում  
բաւականին ցուրտ էր. Խոջիվանքում պօնի  
սրօր կար—այդ աթիլս քահանաները մի  
յայտարարութեամբ գլմել են կոնստիտուրին  
և խնդրում են, որ մի տաք օր նորից նշա-  
նակեն զբեկմանօրհնէրը: Խոջիլը կը յար-  
դի: Ուստի մեանել ցանկացողները կարող  
են շտապել:

**ՀԱՐԵՑ ԱՍԳԻ ՊՈՒՆՏԱԿՈՒՐՔ ԳԵՐԶՔԵՐԵՄԵՆ**

«Էշի վրէն նախը մէկ  
ամուլթ, էշեմէն դիվիր  
գալը՝ վրա էլ կուտը...»

Ասի է կիրակուզէնց Մար-  
քարէն, իր վերջաթողում:

- ?...
- !...
- Գրի...
- Ձբմ գրթ...
- Ինչթ...
- Էնդու համա, վուր, ամօթ է...
- Ինչեմէն իս ամաշթմ...
- Կարթացու գնեքեմէն...
- Վա...
- Չեարովս կնգաւ բերանը կոխպեցի, վուրէ  
չամաշացնի, զալամն վի կալա աշքերս կիւ-  
ղեցի ու քն գո՛ւշմանը, ինչ կուզէ թող զուս

զան զալամիս առկեմէն, թաք իս իմ գրածս չտեսնիմ...

Արա մինձապատիւ, «Սաթարալի» կարթացողներ, լաւ ազանջ արեք...

Ի՞՞՞՞ Գուր Գանքի շիւթումը կարթում էի, վրայ իրիք կլասումը՝ իս ու 7-8 ուրիշ ննգերտինք տեսանք վուր, մինք ուփրո խելօք ինք էլի, քանց միւր մէկէլ ննգերտինքը...

Փիքը արինք, փիքը արինք ու սկսեցինք միւր մինձութիւնը ամենքին շանց տանք: զիզիք վճնց... մէքաշ ընդախտուրնիր զառանք գաղէթ գրեցինք ու միւր ննգերտեքանց, վարժապիտաներեմէն ծածուկ կարթացնիլ էինք տալիս:

Էս գաղէթներեմէն մէկը նընգաւ միւր տեսուչ Կարապիտ Կոստանովի ձեռքը, մէկէլ տեսնիմ մէկ օր, լաւ միտս է գալիս, Շամշինովի զապին տուն եկաւ Արշակ Սպարապետովը թէ՛ Ժան Պուլիշ, քիզ տեսուչը կանչում է, կօտէ...

Ձանս զող նընգաւ թէ՛ կարբը ինչի համա է կանչում, դեղնեցայ, կարմրեցայ, դեղնեցայ, կարմրեցայ ու ըլուզս ու պօխսս գրասեղով գնացի Կոստանովի կուշտը:

Նեքսն մտայ կարբինտը, ու վուրց վուր իմէրէլ լաքիէն գոան մօզ կաղնեցի, Կոստանովը կի, խկի գլուխն էլ չվիքաշեց, ինչ վուր կարթում էր ու վերջը մտիկ արւից ինձ ու ինչ վուր փիքրի մէջ ննգաւ...

—Պ. Ժան Պուլիշ գուք էք, կօտէ, «X»-ի խմբագիրը...

—Իս... իս... ք...ք... ինչ «X».—Իս չիմ իմացի էգթաւուր բան...

—Ես ձեզ հարցնում եմ— գուք էք խմբագիրը...

—Ը... ք... ք... (լաց էլս նրա ստոր

խօսակցութենեմէն) հաւատացնում եմ... պարուն տեսուչ էնէնց... հանաքով ինք արի... մէջէր ինք գրի... ներողութիւն արա...

—Ես ձեզ զգուշացնում եմ, որ եթէ շարունակէք ձեր այդ ձեռնարկը, գուք կարծաւէք դպրոցից:

—Ը... ք... ք... էլ չիմ անի, ներողութիւն արա... իս դասերեմէն դուս ուրիշ ոչինչ բանով չիմ պարապի...

—Դէ գնացէք և նախազգուշացրէք նոյնպէս ձեր ընկերներին...

Էկա կլասը, ննգերտիքս թէ՛ —Ի՞նչի կանչեց...

—Իս ինչ գիդիմ, իմացիլ է միւր գաղէթի համա ու դուս կըզգիմ, կօտէ, թէ՛ վուր էլի էգթաւուր նամադուլ անիք, կօտէ, իս կի լաւ, լաւ, ջուղաբնիր տւի ու ննգերտինք, մինք ազանջ շանինք, չունքի էգ փթած մարթիքը չին ուզում, վուր մինք զարգանանք ու առաջ գնանք, էսօր ժողովք անինք ու փիքը անինք թէ՛ ինչ պտինք անի:

—Էդ տարին կլասում գիփունանքս էլ, ընդախտուրնիրը, ֆուսցինք վրայ էքկու տարին, մէզմէն պակաս խիլքով ննգերտինքը առաջ գնացին... մինք կի էշի հանգի կանգնեցինք...

Էսէնց, սրանից յետոյ մենք միւր նստած էշեմէն չուզեցանք դիվիր գայ ինչկի վիրջը...

Հիմի կի որ փիքը իմ անում թէ՛ տօ, ախմախ. ինչի էնդգամ ժամանակ կորցրի էգթաւուր ծիրտի պիրտի բաների համա, ինչի մի գուրծով չէի պարապում, սր հիմի ո՞վ գիդէ թէ՛ ինչ «գրուստի մինձ մարթ» կուլէի... նոր իմ հասկանում, վուրէ Կ. Կոստանովը միւր լաւն է ուզի, վուրն է թէ

փիքը... Հիմի էլ, էսդանցի Ստամբուլը... նուրց արարմունքնիրը, միտն ինչ քիլիլ ինչ շիլիլ լի բէգախտութիւնը...

Վս Անգլիէն, Փրանգասունը, թուրքիւն ու զգլրաշնիրն էլ պարլամենտ ունին, մինք էլ Ստամբուլում պարլամենտ ունինք, չէ վուր հարկաւուր է, վուր մինք էլ «պարլամենտը» խաղ անինք... պտինք կուի, չունքի կուիս է առաջ տանում գործքիրը...

—Մաշ ինչ անին... մտածեցին մեր «միսնեքեմէն խելունքները»:

—Էնթաւուր բան լուս գցինք, վուր կու գուրս գն...

Փիքը արին, փիքը արին... թէ՛

—Մաշ էգեղեցում «միտինգներ» սարքինք, ասին մի պարտիս հայք:

—Չինք թողնի... ասին մէկէլ պարտիս հայքը:

—Չէ... չիք թողնի... գանդէ գաղէք բիւձօ... թրախի... կիտին զէվիւր բերին մէկգմէկու զլիս...

—Վա՛յ մէ գէզի... բլաւեցին միւսները ու թախ կացան...

—Չինք թողնի, չէ... չինք թողնի «միտինգ» մուտինգ անիք էգեղեցիքում...

Միւր «զոչաղնիրը», տեսան վուր սրանով էլ կուի չի բանամ գալի, պատրիարքին ձեռք գցեցին...

Ու սուս կացան...

—Է՛... ինչ իք անում, մասխարա իք պցում մեր հաուց ասկը, գիփինս ասին «միտինգ» չուզողները... ինչ իք խեղճ Իուրեանին իզրուշկա շինի...

—Մինք նրան շատ ինք հաւնում ու նրա գուրծքիրը ընդունում ինք... ասին «միտինգ» ուզողները...

Փ Ե Լ Ի Է Տ Օ Ն

Ի Յ Պ Օ Ր Տ Փ Ե Լ Ի Յ

II

ԲՈՒՍԱՀԱՅ ՄԱՄՈՒԼ

Մի քանի համառօտ և համայնապարփակ գծերով այստեղ մենք ուզում ենք ընդգծել և բնորոշել սուսահայ մամուլի 1910 թ. կատարած գործը, նրա աւած օգուտը և արդիւնքը:

Նախ վերցնենք օրաթերթերը:

ՄԱՆԱ

Երբեմն ամենայնապագիմական թունդ լիրերալ օրգան, իսկ այժմ ամենայնապաշայեսապէմ: Գործում է շատ համեատ և միշտ գովում է իրեն: Լաւ ընտիր ճաշակի տէր է և այդ պատճառով սպում է գեղարեստական «գովքեր» (հայհոյանքներ) և բանաստեղծական առաջնորդողներ: Նման է երկրորդ հասակի երբ-

տասարգի, որ գուրկ է առամներից:

ՀՈՐԻՋՈՆ


Խիստ լաւ և բազմակողմանի աշխարհահայեացքի թերթ է, այնքան բազմակողմանի, որ ամեն օր ձեռնամուխ է լինում հայ գաղտցական ամենազժւար պրորընիների լուծման, սակայն մինչև այսօր դեռ չի լուծել ոչ մի պրորըն: Հայ ազանաւոր գրողների և մրողների օրգան է, որտեղ ամեն մի գրող պատմում է թէ ինքը քանի տարեկան է, ինչ է ուտում օրեկան, որտեղ է քնում և իրա բարեկամները, ծառաները ովքեր են և այլն: Թերթը ունի բազում լեզուագէտներ, բոլորն էլ պատրաստած մարդիկ շրոնք զրաղում են յիմն-ի պրորընով: Արդիւնաւէտ թերթ է, այնքան արդիւնաւէտ, որ ամեն օր 40 բանաստեղծութիւն է արտագրում և 30 վէպ, որոնք բոլորն էլ մնայուն արժէք ունին. այնպէս որ օրապակաս ծնում են, օրապակաս մեռնում: Թերթը իրեն գովել չգիտէ, բայց բեկամներ սիրում է: Օրեկան հինգ անգամ պատրաստ է գաւանանքը փոխել, եթէ մի օրեկէ շահ ունենայ:

ՍՈՒՐՀԱՆԳԸ

Մեծ օրաթերթ «մը», որի մէջ կըգտնէք պիտանի և անպիտան նիւթեր, տափակ և անձաշակ, խօսում է բամբակի, երկաթի, ցելի, նաւթի և այլ անպէտք իրերի մասին: Սմբագիրը բաւականին ինքնահաւան և ծոյլ մարդ է, այնպէս որ, ոչ զիշերն է քնում, ոչ ցերեկը գարթնում, այլ միշտ և մի գլուխ աշխատում է: Թերթը միակ կուսակցական օրգանն է հայերի մէջ. վաճառականներին շատ սիրելուց հողին դուրս է գալիս. իսկ հայ ինտելիգենցիային այնչափ բարեկամ է, որ նրանց ձրիակեր է համարում: Պատրաստ է բոլոր հայերին առևտրական և արդիւնաբերող զարձնել—եթէ մեր «աղէքը» և հողեւորականները կըհամաձայնէին ձրիակերութիւնից ձեռք քաշել: Միակ պակասութիւնը այն է, որ սրան շատ են սիրում «Հորիզոն» ու «Մշակը», ամեն օր աղօթքներ են անում սրա երկարակեցութեան համար:

ՏԱՐԱՂ

Ամենաճոխ, ամենաբազմաբովանդակ



—Մինք գրան դուս կօնինք...

—Չիք կանա...

—Կանանք...

—Արա մէ փորցեցէք, էնէնց ձիր փըք- նափուրումը դէվէր կու խփինք, վուր ասիք թէ հն...

Ու պատրիարքին վունց վուր ասում ին՝ քաղաքավարի «հրաժարեցրին»...

—Տօ ինչ գուրձ ունէք էգեղեցու ու պատ- րիարքի հիդ, հարցնում է վրայ իրիք պար- տիւնէն «միտինգ» ուղղոյին...

—էնգուր համա, վուր մենք «ցօցիալ» ինք ու եղափոխական... մինք պտինք միշտ կուի, ու ինչ վուր հին է թաղացնինք, ինչ վուր միր քէփովը չէ վունչնչացնինք... մինք ինք ճշմարիտը... մինք ինք արթա- րը, վունց վուր Հոսմի փափը...

—Ա՛խր, ջեր ջնէլ իք, ափիշկա բանիր իք անում, ասիի գուրձքերի համա գա- րար է...

—Դու տուտուց իս, քու խիքը չի հաս- նում... մինք ուզում ինք վուր ինչկի հիմի դուք էք կերի ասիի փուղիբը, հիմի էլ մինք ուտինք... մինք ձեզմէն պակաս ար- ղերք ինք... մինք մինձ մարթիք ինք, մինք բերինք ազատութիւնը...

—Մա՛շ, որ մէկզմէկու հիդ կուինք, էն- չախ ասիի դարդերի համա մի փիքը անի, մի կշտացնի քաղցածին, մի մտածի վուր- փերու համա...

—Մինք էտղգամ դաւի չունինք ու ամեն բան ուզում ինք, վուր միր ձեռքով անց կենա... հասկանում իս... դու շատ իս լը- պըսուի... մէ սրան մտիկ աւէք, վուր վունց է լպտած-լպտած հիդս բաս բըռ- նում... խիքը գլուխդ ժողվէ թէ չէ... Աս տուձ գիգենա, չիմ գիգի թէ քիդ ինչ կո- նիմ...

—Արա ինչ կօնիս... տօ մէ սրան մտիկ տու է...

—Մունջ կաց... ասում իմ...

—Պունքի ազատութիւն է... ինչ որ ու- զիմ կօսիմ... ինչի իս ճիճիինի գալիս... ա- րի լօթիանա ասա վուրէ... աշիփկա իս քու մտածածումը...

—Լաւ... լաւ... մուլափ, մէ էսօր ննպեր- տերանց մօդ անիմ...

—Չիք ամաչում... մէջ ընգաւ վրայ իրիք պարտիւնէն... բարչեցէք... ամութ է, միդ վրայ ծիծաղում ին... դէ չուտա պուշտի արէք...

—Չիմ ուզում...

—Իս էլ չիմ ուզում...

—Ամութ է ասում իմ... հարենիբը կանգ- նել ին ձիդ ին թամաշա անում... բարի- շեցէք, ու իս էլ ձիդ հիդ մետի, խիլուք, օրինաւուր, առանց դալմազալի ու կուի «պարլամենտօրա» խաղանք...

—Դու սարսաղ իս...

—Դու ինգաւուր իս...

—Չիք ուզում բարըջի... ջհանդամը ձիր գլուխը... ինչ գուզիք արէք...

էսէնց անվերջ կուի է ու զալմազալ ու փիքը իմ անում թէ տօ, դրուտ ու դրուտ էստի էլ մէկը Կոստանովի նման չգուրս գն ու ասի թէ «ո՞ւմ տանն իք զալմազալ անում, մինք ձիդ ասում ինք, վուր մօշա անիք ձիդ կուինք, թէ չէ շիօլիմէն դուս կու գցինք...»

Ինչ է, էգէքա չիք աւտում թէ միր պօ- լիտիկուրի գուրձքերը էստի էսէնց է գը- նում...

Իս ու իմ պարզէդի արեւ գիգենա, գրածս իստակ ճշմարտութիւն է, գուզիք ծիծաղե- ցէք, գուզիք լաց էլէք...

Մախլաս, ասիլ է Գասպար Կալատուզովը

փիլիսոփէն շուս է էկի աջ կուցրի մէն հազացիլ է ու մետիլ է... Գայ միդնջ —Առ ձու, քնիլ է... հա քնիլ է...


Կարթալիմէն յետոյ, վուր գուք էլ «չվա- րակիք» էդ ցաւեմէն, խորհուրդ իմ տալի դօխտուր էրլիսի 606-եմէն անիք ու պրինցաւաւ անիլ տաք ձիր ջանքը, չուն- քի ազատ կու մնաք ամեն շարիքեմէն:

—Վերջացաւ... հարցնում է կողբումս նստածը:

—Հրամանք ես... վերջացաւ:

ժան Պուլիչ

ՀՍՍՍՄԲՈՒԼ



ԱՌՂՈՁ—ՀԻՒԱՆԴ

—Պարոն բիշկի, ինգրում եմ մի լաւ քնէք ինձ, գիշեր-ցերեկ տանչում եմ, մի այնպիսի դե- դասուն գրէք, որ միանգամայն ազատեմ այս տա- րօրինակ ցաւից:

**Բժիշկ.** (քննելուց յետոյ)—Ախորժակ ունիք: —Փոտաւօր:

**Բժիշկ.**—Մարտողութիւնդ ինչպէս է:

—Հրաշալի... միայն գլխաւոր տեղը մոտացօք քննելու:

**Բժիշկ.**—էլ ինչ մնաց:

—Գրպանս... պ. բիշկ... գրպանս բժշկեցէք:

**Խնդրասու.**—Պարոն փատաբան, ինգրում եմ հաշտեցնէք մեզ, հիւնդ տարի է... էլ չեմ կարող դի- մանալ ես աղքատ եմ, իսկ հակառակորդս հարուստ:

**Փաստարան.**—Մի առժամանակ համբերիք սի- րելիս, նրան էլ քո վիճակին հասցնեմ, այնուհետե ինքնեք կըհաշտուէք:

ԽՈՐԱՄԱՆԿ ԳԻՒԳԱՅԻՆ

**Գաղափ.**—Ասան ինձ բարեկամ, այդ ինչ է ա- ւանակիդ բերդ:

**ԱՂԲԻԻ**

Բիլսում է շատ առատօրէն, որ- պէս Կուր գետը Վրաստանի: Ասում են 50 միլիոն բաժանորդ ունի և տարածւած է ամեն տեղ, սկսած Թաւրիզից մինչև Վիէն- նա ու Լիսսաբոն, Մասիսի կատարից մինչև Խրիստիանիա, Սևանայ վանքից մինչև Լօն- դոն, Բերլին և Պարիզ: Ասում են նոյնպէս, որ մանուկները առանց նրան մեռնում են չումայից և խօլերայից: Կարևոր թերթ է տիեզերքի բնակչութեան համար:

**ՀՈՂԻՏ**

Իրեւ շարաթաթերթ և իբրև օր- գան յառաջադիմական կուսակցութեան՝ ամենանշանաւոր ազատամիտն է ուսանայ թերթերի մէջ: Կաթուղիկոսի մահաւան առ- թիւ բոլոր թերթերը տիրացուական ներ- բողներ ու ճաւեր գրեցին իրենց էջերում, իսկ նա իր դաւանանքի մէջ մնաց անսա- սան և անընկճելի, որպէս յատուկ է առհա- սարակ սօցիալիստական իսկական օրգա- նին: Միակ թերթն է, որ մեծ զարկ է տա- լիս ժողովրդեան յառաջադիմութեան: Հա-

և ամենատարածւած ամսագիր, որի մէջ գրում են բոլոր յայտնի և անու- նի գրականագէտները, գեղարեւեստագէտ- ներն ու գրողները՝ այսինքն վիպասաննե- րը, բանաստեղծները, գրամատուրգները, քննադատները, կրիտիկոսները, մատենախօս- ները և գեղագէտները, ի հարկէ մեր և օ- տարազգի բոլոր գրողները միասին, սկսած Կնուտ Համսունից, Լև Տոլստօյից և Իբսէ- նից մինչև Արիստոտելն ու Մոկրատը, Պլա- տոնն ու Շոպէնհաուէրը, Նիչչէն, Մետեր- լինկն ու Պշիբլեակին և այլ հռչակաւոր ու անւանի գեղարեւեստագէտ գրողները: Ամ- սագիրը ունի 100 հազար վճարող բաժա- նորդ և 20 ընթերցող: Հայ հասարակու- թիւնը ջերմ կերպով պաշտում է նրան և անպայման գնահատում նրա արժանիքը: Շատ շահաւէտ թերթ է, այնպէս որ կար- դալու ժամանակ ամեն մի ընթերցողի թէ կուին է լցւում խելքով և թէ գրպանը փողով: Բազմաշարժար խմբագիրը գրաշարնե- րի պատճառով կուում է ամենքի հետ և դատարանով սպանում:

յերը, որ այժմ երջանիկ գրութեան մէջ են, գրանով պարտական են «Հովիտ» շաբա- թաթերթին, որովհետեւ նա է ստեղծել այդ խաղաղ և անպայման նախանձելի գրու- թիւնը: Ս. Յարութիւնեանը շատ է սիրում այդ թերթը:

**ԼՈՅՍ**

Տեղն 'ու տեղը լոյս ու փայլ: Բոլորովին նման է Նոր-Նախիջևանցիներին և Բոստովի հայ վերաբնակիչներին: Դիրքով իսկական շաբաթաթերթ, ծաւալով օրա- թերթի, իսկ բովանդակութեամբ... չգիտեմ... Տպւում է մաքուր և աւանդական ուղղա- գրութեամբ... ուրիշ ոչինչ:

**ԼՈՒՄՍ**

Կատարեալ ամսագիր, որտեղ տըպ- ւում է գրականութեան ամեն ճիւղի նո- բութիւններ, սկսած ամեն մի կա- թողիկոսի ծննդեան պատմութիւնից մինչև նրա մահը՝ հանդերձ մանրամասնութեամբ ու կոնգակներով:

(Կըշարունակելի)

Ճօն-Սեփեհնու

ՄԵՐ ՈՒՄՈՒՑԻՉՐ

(Գովք)

Գեղեցիկ է մեր ուսուցիչն, անմամն,  
Վարդի նման,  
Երկինքն այնպէս շնորհել է մէկ միայն—  
Մեզ միայն,

Հասակը կարճ, բիսերը սեւ ու երկար  
Մազերը շէկ, դէմքը կտր... սիրտը վառ,  
—Մեզ համար  
Գանձ անմար:

Աչքեր ունի նա երկնային, ծովից խոր՝  
Անսնորբը,  
Ճաղկի ժպիտ, գարունքի վիշտ շրթներին՝  
Միշտ լինի:

Կուրծքը բորբոս, թախիծի անհոգ, դէմքն  
արդար  
Անդադար,  
Հեք են տալիս, սրտերի թեր՝ բոցավառ,  
Անսպառ:

Չեւեր ունի նա դիւթական-թախիշեայ՝  
Սիրաշահ,  
Անխոյժ քայլած, անմեղ նայած, նորը  
լեզու՝  
Մեղմ ազդու:

Ման է գալիս փողոցներում նա՝ գո՛ր յշ,  
Միշտ քնքոյշ  
Օրհորեններ թեւին կցած ու երգում՝  
Երդ անոյշ,  
Մեղանո՛ յշ:

Նա նայում է, ոչխարի պէս—ժպտերես,  
Նա խօսում է, բրբուռի պէս—բացր ու հեզ,  
—Սիրավառ,  
Ինչպէս զատ:

Նա բերում է միշտ քաղցրեղէն մեզ համար  
Անդադար,  
Ժպտում է մեզ, նամբոյր տալիս—մեղմ  
ու վառ,  
Ինչպէս մայր:

Նա այրպէս է միշտ փաղաքշող ամենքին,  
Միայն կին,  
Բայց ընտրովեամբ՝ նրանց միջին—  
Գրաւչին,  
Գեղ՝ցկին:

Գեղեցիկ է մեր ուսուցիչն, անմամն,  
Վարդի նման,  
Նա կուզենար իրան սիրենք յախտեան՝  
Մարդի նման:

Օրհուրդ

ԳԱՆՈՒԿԱՆ ԳԵՂԵՑԻԿ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԺԻՒՂԱԿ — ՈՐՄՈՅՅՅ  
ԳԱՆՈՒԿԱՆ ԲԱՆԱԲՈՒՄ

Բոլոր ժողովականները սաստիկ ոգևորւած են: Ամենքի դէմքին փայլում է ժպիտ ու բարութեան: Սրանց մէջ կան ինքնավստահ ուսուցիչներ, արշինք պինդ ձգող գործակատարներ, ձու խուզող քահանաներ, անգործ, բայց իրանց անխով, գործացած երիտասարդներ և զանազան համալսարաններից խոտված, բայց դեռ փայլուն համադրեցանքներով ուսանողներ: Գազանի քէտար-կութեամբ վերջին պատգաններից ընտրեցին նախագահ:

Նախագահ.— Պարոններ, ժողովը բացւած է: Լսեցէք: Մենք չենք եկել աշխարհ միայն հագնելու և ուսելու համար: Մենք իրաւունք չունենք ուրիշի աշխատանքը վայելելու: Չրիակերութիւնը յանցանքների աճնախոշորն է: Պէտք է արթնանալ. շարժւել, մտրակել կենդանի մարդ ենք և ոչ զիակներ:

Ժողովականներ.— «Բրա՛՛՛, բրա՛՛՛» գրողով, որոտրնգոտա ծափահարութեամբ և երկարատե «ուսանքով» ոգևորեցին նախագահին:

Նախագահ.— Շատ ուրախ եմ պարոններ, որ իմ ցամաք ճաւը արժանացաւ ձեր ուշադրութեան: Այդ կընշանակէ մեր մէջ սէր և համերաշխութիւն կայ և մեր գործը յաջողութեամբ պիտի պսակւի: Էլ չերկարացնենք. այսօրայ մեր ժողովի նպատակը ձեզ բոլորից յայտնի է: Մեր բոլորիս ցանկութիւնն է հրատարակել մի հայերէն կառնուար, օգտակար և անկրտակցական օրաթերթ. ունենալ մեր սեփական օրգանը: Բաւական է ինչ որ կրտարական զեր կրտարեցիկնք, այժմ պիտի դառնանք ներգործական:

Ժողովականներ.— Պատրաստ ենք,— մի բերան գոտային և ծափերի տարափներ տակ ծածկեցին նախագահի երկրորդ ճառը: Նախագահ.— Պարոններ, հարցը վճռու է, այժմ եկէք լրագրի անունը մերտեւ ժողովականները իրար յետեից շարեցին հետեակ անունները— «Լոյս», Փարոս, Կրտար, Արեգակ, Ասիւճ, Մկրտա, Սղոյ, Ուրախ Մախաթ, Կացին, Վահան, Օձ...»

Ամենքը ցանկանում էին, որ ապագա լրագրի անունը իր հանձարից ծնւած լինէ այդ պատճառով ծագեց երկարատե վիճարանութիւն և 20 հոգու մէջ առաջ եկաւ կուսակցութիւն. օձական, մախաթական կացնական... այլ...

Մատակցած վէճը դադարեցնելու համար ընդհանուր համաձայնութեամբ վիճակ պայցին և յաղթանակը տարան «Յձականները» լրագիրը կոչեցաւ «Օձ», Բոլորը միարժան գոտային. «Կեցցէ՛ «Օձը», թող խալվստակար արարածներին:

Նախագահ.— Պարոններ, ամեն բան շարաւ, բայց լաւ մտածեցէք, ամեն օր հր...

Գիւղացի.— Ոսկի է, պարոն... ոսկի... դեղին, փայլուն և ընտիր:  
Բաղաւ.— Համեցէք խնդրեմ, ձեզ համար բայ է մեր տան դռները...  
Գիւղացի.— Միայն աւանակը թող դահլիճ մանի, իսկ դու գնա ախար:

—Ինձանից դգոյշ կացէք պարոն... դուք չգիտէք թէ ես ինչ պտուղ եմ:  
—Շատ լաւ գիտեմ... դուք գիտեմ էք... մի համա պտուղ, որ երբէք իր կամքով չի հայնում...  
Անդադան



Լ ՈՒ Ը Ծ Ն Ե Ր


1. Բայցը, եթէն, գուցէն՝ սատանի ապրանքներ են:
2. Կապիկներն ու տէրները չեն թողնի իրենց պատճեն:
3. Այնպէս ճիշտ է՝ ինչպէս ամէնը տէրաւերի մօտ:
4. Չրի պաշտօնը մարդուն գող է դարձնում:
5. Ով ուրիշին հալածում է, ինքն էլ պիտի վազէ:
6. Սկիզբն ու վերջը իրար ձեռք են մեկնում:
7. Ով շատ է սկսում, քիչ է վերջացնում:
8. Ով քչիցն է սկսում, որ չի կարող վերջացնել, այդպիսին աւելի կըշահէր, եթէ ոչինչ չսկսէր:
9. Եթէ աշխատանքը համով լինէր, մեկիքն էլ կանէր:
10. Աղքատն ունի որդիներ, իսկ հարուստը՝ հորթեր:
11. Հաւը որ ընկաւ՝ փռում է պտուղած:
12. Բարձր ծառն էլ խիստ քամի ունի:
13. Անհաւատարիմ կիներ մարդու իսկական թաղումն է:
14. Երբ վարդապետը վանքում անտես պահեց, Հայր մերը կըմոտանայ:
15. Պատասը բեռնից մեծ չպիտի լինի:
16. Մեծ մարդկանց խնդրի անունը հրաման է:
17. Որքան բարեկաշտ է քրիստոնեան, այնքան ծանր է նրա խաչը:
18. Երբ Քրիստոսը մենակ էր, սատանան նրան էլ փորձեց:
19. Ով շատ է սպանում, նա վտանգաւոր չէ:
20. Կարճ արշինով շատ կարելի է չափել:
21. Յաղթողը գրօտակին է նայում:
22. Կիրակի օրուայ մանած թելը կարում է:
23. Մի թշնամի էլ շատ է, իսկ հարիւր բարեկամը՝ քիչ:
24. Մտածմունքը մաքս չունի:
25. Վանքի կատուններն էլ ծոյլ են:
26. Մարդիկ սիրով են տաքանում վանքի կրակով:
27. Անձնական փառքը նախանձի անձրն է:

Առական

Գ Ա Տ Ա Ր Ա Ն Ո Ւ Մ


Պատաս.— Ծիշտ է որ դու, մեղադրեալ, այս պարոնի բաճկոնի վրայից ժամացոյցի ոսկէ շղթան ուղեցել ես յախտակիր:  
Մեղադրեալ.— Բարեբաղին սխալ են ձեզ բացատրել օր. դատաւոր: Այժմ մօղա չէ Քրակի հետ ոսկի շղթայ կրել, ուստի ես նրան հասկացրի, որ վերցնէ:





—Պարոններ, այսօրւանից ես ձեզ հետ եմ, ձեր քաղաքագլուխն եմ, յոյս ունեմ, որ ինձ հետ միասին, գուց կըզործէք խաղաղութեամբ և հանդարտութեամբ. ես բնաւորութեամբ շատ լաւ մարդ եմ:

„ԱԶԱՏԱՄԻՏ“ ԽՄԲԱԳԻՐԱՏԱՆ. ՓՈՂՈՎԸ



—Ս...ս... դուռը փակէք, թող ոչ ոք չիմանայ թէ ի՞նչ ենք անում:  
—Մեր գործըկազմակերպը պէտք է որոշ լինի.  
—Բողոքովին ո՛չ. մենք պէտք է ժամանակի ոգին իմանանք—երբ կղերականութիւնը ուժեղանում է պէտք է կղերական դառնանք՝ երբ ազատամտ... ազատամտութիւն, երբ խուլիզանութիւնը...  
—Էվրիկա... խուլիզան պիտ դառնաք. ս... թող ոչ ոք չսէ. դա շատ լաւ կըլինի: Դա մեր դեկզը պիտ լինի. ժամանակը այդ է պահանջում:



տարակելու համար կարող ենք այնքան նիւթ գտնել, որ թերթը իր ժամանակին անխափան գուրս գայ:

«Շղթայր, շեշտեց ժողովականներից մինը, նիւթից շատ ինչ կայ: Այ, օրինակի համար յունւար ամսում մեր գաւառական թղթակիցները ամեն կողմից կընկարագրեն սարսափելի ցրտերը, աղքատները վառելիք չունեն, հարուստները քարացել են, չեն օգնում, այս ինչ ձորերում մարդիկ են խեղդել: Յետոյ կըզբնեն Նոր-Տարու գիմաւորման մասին, կընկարագրեն այդ գիշերայ պարահանդէսները, եօղկաները...»

Փետուարին կըզբնեն Վարդանանց տօները, կընկարագրեն կարգացած ճառերն ու ոտանաւորները, ժողովրդի անտարբերութիւնն ու տարբերութիւնը: Կընկարագրեն, թէ որտեղ ջրալի անցաւ, տօները, որտեղ ցամաք, որտեղ շքեղ, որտեղ անշուք: Կընկարագրեն բարեկենդանների քէֆերը, այդ քէֆերից առաջ եկած տուր ու դժբոցները, հարսանիքները, չհաս պսակները, աղջիկ փախցնելը, անչափահասներին կաշառքով պսակելը: Մնացեալ ամիսներին, Աստուած ողորմած է, նշանաւոր մարդիկ կըմեռնին, կընկարագրեն նրանց կենսագրութիւնը. յուզուրկաւորութիւնը, կարգացած ճառերը, այդ մասին եղած կտակները, քէլեխները, պսակները: Սրանից յետոյ, փառք Աստուծամեն ամիս կատարում են յորելեաններ. 50 ամեակ, 40 ամեակ, 30 ամեակ, 20 ամեակ, 10 ամեակ, 5 ամեակ, 4 ամեակ, 3 ամեակ և այլն: Յետոյ կըզայ ամառը—խօլերայի սեզոնը: Այն ժամանակ կըզբնեն բարակների, բժիշկների, մեռնողների, սողցողների մասին:

Այդ բոլորից անկախ տեղ պիտի տանք. «ւ»-ական, «վ»-ական, «ե»-ական և «է»-ական «օ» և «ո»-ական ուղղագրական կոիւնիւրին: Տեղ պիտի տանք թեր և դէմ բանականութիւններին: Այս բաժինը երբէք չպիտի փակենք, երկու կողմի պրածներն էլ կը տպենք, դա գրչակերտ է, թող թակեն իրար, խայտառակեն իրար, թող բաց անեն միմեանց գաղտնիքները...

Պարտաւոր ենք մեզ հետ մրցող, մեզ քնատող, մեր մասին վատ խօսող լրագիրների հետ բանակուել մտնել և ցոյց տալ, որ բացի մեր լրագրից մնացեալ լրագիրները հայի հոգւով չեն գրում. սակայն զգացմունքներ չունին, ծառայում են օտար ազգերի շահերին:

Պէտք է շեշտենք, որ միայն «Օձն» է, որ անաչառ կերպով խայթում է ժլատ հարուստներին, գող երեցփոխներին, շատ մեղցնող քիչ սաղցնող հեքիմներին, անգրագէտ տէրաէրներին, դեր չիմացող ինքնակոչ անշտրէք դերասաններին, գող գործակատարներին, իրանց սպիտակեղէնը կարելի չիմացող անպէտք տիկիներին, դեռ չաւարտած 20 սիրական ունեցող օրիորդներին, ձու խուզող վաճառականներին և այլն...

Սեպտեմբերին կըզբնեն հոգաբարձական

և ուսուցչական երկարատև կոիւնիւրը, բողոքները, դրանց հալածանքները, գպրոցների բացելն ու փակելը:

Լուրերի բաժնում կըտպենք. Կիրակոսի կողպէքը կտարել են, Մարկոսի խտուր այրել են, մի կին չորս երեխայ է բերել, վերջապէս կըտպենք մէկը սայլի տակ է ընկել, միւսը քացախ է խմել, երբորդը անբուժելի սանջու ունի, հինգերորդը մնակացաւ, վեցերորդը յանկարծակի մեռաւ, եօթերորդը կնոջը թողեց, ուրիշ կնիկ բերեց, ութերորդը կարճ արշն, թիթե կշնք ունի... և այլն...

Այս բոլորից յետոյ ընտրեցին խմբագիր և լրագրի իւրաքանչիւր բաժնի համար առանձին աշխատակիցներ և խմբագրեցին հետեւեալ յայտարարութիւնը.

«1911 թւականի յունւարին լոյս կըտեսնի «Օձ» վերնագրով ամենօրեայ թերթը. որի շուրջը արգէն հաւաքւած են թէ նորուպուկան և թէ սահականի ակամաւոր յայտնի գրողները:

Թերթը լինելու է անկաչառ և զուտ հայկական թերթ, հայի շահերին ծառայող: Տարեկան բաժանորդագինը 8 ռ. կէս տարւանը 4 ռ. քառորդ տարւանը 2 ռ. հատը 5 կ.: Ապառիկ ոչ ոքի չենք ուղարկի (խոստովանանք լինի 4 0 բաժանորդի սպառիկ կըտանք, չարէն ինչ):

Նախագահ.— Պարոններ, այս բոլորը շատ լաւ. հիմա հակառակն էլ մտածենք: Եթէ մեր լրագիրը այնքան բաժանորդ չունեցաւ որ կարողանանք շարունակել, ծախքը ծածկել—այդպիսի դեպքում ինչ պիտի անենք:

Մի ժողովական.— Դրա համար մտածել հարկ չկայ, լրագրի մէջ կըյայտարարենք. «Մի շատ յարգելի պատճառով անորոշ ժամանակով «Օձը» դադարում է: Մեր բաժանորդներին բաւարարութիւն կըտանք»:

Այս փոքրիկ յայտարարութիւնը մի փափուկ բարձ է, որի վրայ անուշ կըքնեն մեր բաժանորդները, իսկ մենք կըվայելենք հաւաքած բաժանորդագները:

Ղալայի Մարգարի եղբայր Դեբրաս



Դ Է Պ Ի ՈՒ Բ

(Նւէր մօզայի բոլոր սիրահարներին)

Գնում են գնում, բոլորն էլ յառաջ, Բոլորն էլ ունեւէ, համարձակ ու բաջ. Գիտուն թէ տղէտ, Ժկա՛ր թէ խիզա՛ւի, Բոլորն էլ դէպի պերճա՛նք ու խրա՛խ:

Յառաջ—դէպ յառաջ,— ո՞վքեր են եւ ո՞ր, Ահա ձեզ մի հարց նազանից թափոր, Մարդկա՛յին զանգած, խօ՛ւ ու սնահա՛ր, Դէպի «տօղա» ի անսահման աշխարհ:

Մարդկային միտքը, դարատու թմրից

Հիասթափած, թո՛րչ է գործու՛մ  
Թո՛րչք տարահե՛ւ, հանճարի բուխց...  
Անցնում ու հանգում ճողման փոքրում.  
—Ահա հանգնե՛լ, ԱՐՄՈՅՅՅ

Գնում են, գնում. բոլորն էլ դիւթա՛ծ,  
Սի՛ն անուրջների հովերով տարա՛ծ,  
Գինով «տօղա»-յի, գինով հմայքի,  
Եւ դատապարտած, անվե՛րջ տրփանքի:

Յառաջ— դէպի ո՞ր, արդեօք վերութի՛ւն,  
Վսեմ իդէա՛ւ, ուսո՞ւմ, կըթուլթի՛ւն,  
—Ո՛չ, ո՛չ, բոլորն էլ, դէպի մթովթի՛ւն,  
Դէպի վի՛ն, անդո՛ւմ, դէպի շնովթի՛ւն:  
—Ահա հանգրւան...

Գառ

Ե Ր Գ

Աստուծանն զով ու զեփիտ,  
Ճաղկի մ՛րժունջ, էսօսուն աղբիւր.—  
Մենք կեանք կուզենք, զգանք ու բոյր,  
Ջինջ երազներ հով ու համբոյր:

Խօսեց դայլայն երգչի տխուր  
Յօղաթիթիթ վարդենուց լուր.—  
Մենք վարդ կուզենք, երգեր ու սուգ,  
Մեր սեւ սրտի ողբ, արտասուք:

Մով կամարում, անծայրածիր,  
Վստեց ժպիտն ոսկեթոթիթի,—  
Մենք շող կուզենք, կեանք ու զարուն,  
Մեր սեւ հոգուն... երազ ու քուն:

Արեօթ

Պ Ո Ս Տ Ա Ր Կ Ղ

Տիւզերրի մէջ, օր. Դովլաթեանին. Մենք  
ձեր շարադրութիւնը չենք ստացել.  
Խնդրում ենք գրէք, տեսնենք ինչ էք  
ասում, եթէ այդպէս է՝ բաշուտաւ:

Երեւան. Փալանդուղ Մկոյին.— Ուղարկում  
է անընդհատ:

Աշտարակ. Մանահէր Յարութիւն.— Ձեզ նա-  
մակ կըզբնեք:

Պոլիս. Ժան Պուլիչին.— Ձեզ թոյլատրում  
է բաւ ձեր հայեցողութեան վար-  
ւել, գեոպանների հետ բանակ-  
ցեցէք. իմ կանդիտատուբան ես  
չեմ գնիլ: Բարենք վեհափառ  
Սուլթանին, Մհրդատ Հայկազին,  
Մեղքոն Գուրջեանին, Եղիշ Գու-  
րեանին, Բիւզանդ Յիզեանին,  
Քաչալ Մաչարեանին:

Թիֆլիս. օրիորդ Աստ. Մ...եանին.— Ժա-  
մադիր կարող ենք լինել, ինչու  
չէ, բայց խնդրում եմ սիրային  
հարցերի մասին չխօսենք ժա-  
մանակ չունիմ:

Բագու. Բօմժուր Մելքոնին.— Երկու նաւթի  
հոր ձեզ ընծայ. աւել չեմ կարող  
տալ. վատ ժամանակներ է, ծախս  
շատ ունենք:

Վլադիկաւկազ. Յ. Տ...եանին.— Կարելի է,  
հի, հի, հի—շատ լաւ էք ասում,  
ձի՛շա. գարմանալի է, հա, հա,  
հա, հա, թոււմ է կաթիլիկոսական  
կոնստիտուաներով տակաւին  
չենք գրադոււմ, հա, հա, հա, սի,  
սի, սի, հի, հի...



# ՀԱՏԱԾԱԽՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Եղբ. Ա. և Ա. Միլովների

## ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ

Գողովինսկի պրոսպեկտ, Կաղենների կորպուսի դիպոց.  
ՍՈՎՈՐԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՄԻ ԱՆԳԱՄ

## ՄԵԾ ԵՒ ԱՐԺԱՆ ՎԱՃԱՌՔ

միայն 6 օրով 17-ից մինչև 23 յունիսի

## ԽՈՂՈՐԱԳՈՅՆ ԶԵՂՋՈՎ

— Սեզոնից մնացած ապրանքների —

Յիշատակած օրերում առևտուրը կանգ կառնի ճաշի ժամանակ, ժամը 2<sup>1</sup>/<sub>2</sub>—4, որովհետև մագազինը  
փակ կըլինի: 1—1

МАГАЗИНЫ ГРОМАДСКАЯ ЭКОНОМИЯ

Композицион. бѣлья.

Тифлисъ. Пушкинскій пассажъ № 8

ГРОМАДСКАЯ ЭКОНОМИЯ

шведскаго композицион. бѣлья.

Носитсаъне менѣе двухъ лѣтъ

Постоянный большой выборъ свѣжаго товара.

Воротниковъ, манишекъ и манжетъ.

по фабричнымъ цѣнамъ.

Передѣлка въ любой фасонъ бесплатно

Продюются портняжныя принадлежности, какъ-то пугоицы, подкладки, мѣль и впрочѣе.

Имѣется таоте галантерейный Отдѣль

00—27

М. А. КАЛТАКЯНЦЪ



Բացած է 1911 թ. բաժանորդագրություն

## „Լ Ո Յ Ս“

Գրական-Հասարակական շարաժամերի

(Ներքոյ տարի).

„ԼՈՅՍ“-ի բաժանորդագրւնը.—ն. Նախիջևանի, Ռաստովի ու շրջակայ հայ գիւղերի համար տար.—3 ր. կէս տ.—2 ր. 3 ամ.—1 ր.: Ռուսաստանի այլ տեղերի համար—տարեկ. 4 ր., կէս տար.—2 ր. 50 կ. և 3 ամ.—1 ր. 50 կ.: Արասահ. տար.—6 ր. կէս տարին 3 ր. Համարն ամեն տեղ արժէ 10 կոպ.:

Հայէն՝ Нахичевань н.Д. Въ редакцію армянск. журнала „ЛУЙСЪ“.

Խմբ.—Նրատ. Բժ. ԳԷՈՐԳ ՌԷԻԶԵԱՆ.

## ԿԱԹՆԱՏՈՒՆ ԵՒ ՍՐԾԱՐԱՆ

### Ձ Ի Ի Յ Ա Ր Ի Ա

Գողովինսկի պրոսպեկտի և Գիորգևսկի փողոցի անկիւնում.

ՕՐԻԱՆՏ ՀԻՒՐԱՆՈՑԻ ՏԱԿ, ՔԱՇԻՆԹԻ ԵՎԵՂԵՑՈՒ ԴԻՄԱՑ.

\*\*\* Ամենաթարմ ու մաքուր կաթ, մածուց, շոկոլադ, կակաո \*\*\*

## Իսկական տաճկական սուրճ

Թ Է Յ Բ Ա Ր Չ Ր Յ Ա Տ Կ Ո Ւ Թ Ե Ա Մ Բ

Մատակարարում են իմ անմիջական հսկողութեամբ պարտաճանաչ և մաքուր պահած ծառայողներ, մեր կաթնատուները սրճատուները յաճախող մեծարելի հասարակութեան:

## \*\*\* ԳՆԵՐԸ ՄԱՑԶԵԼԻ ԵՒ ՉԱՓԱԻՈՐ \*\*\*

Խնդրում ենք անձամբ համոզւել մեր ասածների ճշմարտութեան և մեր սրճատան-կաթնատան բիրեղանման մաքրութեան համար:

Յարգանքով Տրապիզոնցի Յարութիւն Պետրոսի Պետրոսեան  
25—19

(ա. օր)

## ԲՈՂՈՐ ՏԵՍԱԿ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ԳՆՈՒՄ ԵՆՔ ԱՆՄԻՋԱՊԷՍ

ԱՐՏԱՍԱ ՀՄԱՆԵԱՆ ԵՒ ԽՈՒՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻՅ

## „Օ-ԲՈՆ ՄԱՐՇԷ“

Գ ր ա ն տ ե ռ է յ ն ի ա պ ռ ա ն ք ն ե ռ ի մ ա գ ա զ ի ն

Գողովինսկի պրոսպեկտ, Աբուլի բասթոնի դիմաց, տուն ԱՆԱՆԵԱՆԻ

Որպէսզի վերջին նորութիւնների սիրահար պատուելի հասարակութիւնը

## Հ Ա Մ Ո Ջ Ի Ի

որ մեր մագազինում ապրանքները անհամեմատ ԱՐԺԱՆ են և աւելի ԳԻՄԱՅԿՈՒՆ գնահատելի

\*\*\* քան մի ուրիշ տեղ \*\*\*

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԱՆՉԱՄԲ ՀԱՃԷՔ ԱՅՑԵԼԵԼ ԵՒ ՍԵՓԱԿԱՆ ԱՉՔՈՎ ՏԵՄԵԼ

25—15

## ԱՊՐԱՆՔԸ ԱՐԺԱՆ, ԳՆԵՐԸ ՎԵՐՋՆԱԿԱՆ

(Կ.հ.շ.)



გადასასვლელი სარკინოგზის მშენებლობის  
შესახებ

—საგვარდნილი იქნება:  
—ე...ა...ა...ა...